

կերակուրը—յայտնի փաստական Ամիր-Հասան-Չէյնար-Արդին-օղլի, նրա եղբայր Քանդիր-Ղուլի և Շինի-Հայրուսի բնակիչ Նալաֆ-Մաշադի-Ալլադի-օղլի, որ երկուսն ալիս առաջ միասին էր առաջակներին Այս երեք առաջակները յունիսի 9-ին սպանեցին Շինի-Հայրուսի զինվարական օգնական Իսաուֆին, իսկ երեք շաբաթ առաջ Շինի-Հայրուսի բնակիչ Հասան-Քալաֆ-օղլին, բացի սրանից զբաղապարհ են զանազան ժամանակ ձիեր և այլ անասուններ աղանդներին, բաշտեցներին և չինիս-Հայրուսիներին:

Կառավարիչ սենատի հրամանով այս 1903 թվականին զինվարական և հրապարակապետական պետության բոլոր տեղերից 30,732 հոգի:

Թիֆլիսի ձայնաւորներին մէկը մտադիր է հարց բարձրացնել այն մասին, որ իրաւունք ունի Թիֆլիսի մասնակի ներկայացուցիչներին ներքին լինել թէ քաղաքային ուղարկվալի և թէ դուրսի զանազան մասնաժողովների նիստերին:

Մօտ օրերումս մշակված և ներկայացրված է կառավարության հաստատություններին մի նոր ընկերություն Երևանի, որի նպատակն է փոխադարձաբար ապահովագրել Պարսից Մոցուս լողաօդը նաւերը:

Պետական խորհուրդը թոյլ է տուել Պետախ գործակալ հաստատություններին վարչական շարունակել առաջնակա հինգ տարվա ընթացքում, մինչև 1908 թվականը, առաջ վերցնել այն անձերին, որոնք գնում են այդ քաղաքը մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը Իւրաքանչիւր տնձն պարտաւոր է վճարել Պետախգործակալ քաղաքային վարչության օգուտին 2 րուբլի, իսկ ընտանիքներին, որոնք բաղկացած են երեք-չորս և աւելի անձերից—4 րուբլի: Պետական խորհուրդի այդ կարծիքը Բարձրագոյն հաստատված է այս տարվա յունիսի 2-ին:

Երևանում գաւառի ՆՈՒԿՈՒՋ գիւղից մեկ գրում են, ձևայ տնայած յունիսի ամսի 28-ին, շաբաթ օրը, ցերեկվայ ժամը մօտ 12-ին պարսից սահմանի մօտ, մօտաւորապէս 4—5 վերստ հեռու Արարիւտ գիւղից, որը գտնվում է Արարի գետի ափում, Շահ-Քալաֆի զինաց, սպանուցնված մօտ 50—60 ձիււոր զորքեր յարձակվում են ճանապարհորդներին վրա և կողոպտում են բոլորին, թողնելով իւրաքանչիւր ճանապարհորդի վրա մէկ շապիկ և վարտիկ: Կողոպտվածները երեք կառքերի վրա նստած (գորգներ) գալիս են եղել Սալմաստի զանազան գիւղերից: Առաջակ զորքերը տարել են և երեք կառքի 12 ձիերը: Կողոպտվածները եղել են թուրք 18 հոգի, որոնցից 4 հայ, 2 ասորի և 9 պարսիկ: Կողոպտված 2 հայը Սալմաստի հին քաղաքից երկու եղբայր Յովհաննէս և Մկրտիչ Բուշաղեանները մեծ դժուարութեամբ հասնում են երեկոյեան Խանլուխար հայաբնակ գիւղը և դիմում են գիւղացիներին օգնութեան: Քրդերը պարբերաբար ամեն տարի յարձակվում են այդ տեղերում խեղճ և անօգնական ճանապարհորդներին վրա: Կողոպտվածներից 2 հայը և մի քանի պարսիկներ գնացել են Նախիջևան հեռագրելու ուս հարկաւորել, իսկ կառավարները, որ ուսանապատակ են եղել, հեռագրել են Քալաֆի ռուսաց հիւպատոսին և խնդրել են կարգադրութիւն այդ մասին: Կողոպտվածներին թույլ է եղել և Արգու-մանեան առտարական տան ներկայացուցիչը մէկ պարսիկ զինուորի հետ:

ՆՈՐ-ԱՆՆԱՋԵՏԻՑԻՑ մեկ գրում են, «Գաւառացու համար ոչ մի տարի չէ անցնում առանց զժառոգութիւնների. երաշտը, կարկուտը, անսթանալի տեղացող յորդ անձրևները, հեղեղը, ժամառախորդ և այլ այսպիսի բնական պատահարները տարեցատարի, հերթով գալիս են լրացնելու: Գիւղացու առանց այն էլ ցաւալի կեանքը պակասը Դեռ մի քանի ամիս է վերացել մեր գաւառի զանազան տեղերից առաւել ժամառախորդ կարմառներ, երբ նորից սկսվեց մի ուրիշ համաճարակ տաւարացաւ—գաւաղը, որ ընտում է անասուններին թէ բերաններից և թէ ոտքերից: Սոսկալի հիւանդութիւնը, որին այնքան էլ զոհ չեն գնում անասունները, րօպակապէս ուժասպառ է անում և գետնի պառկեցնում նրանց: Բերաններում վերքեր և բլուրկներ են դուրս գալիս լեզուի ու լնդերի վրա, ոտքերի սմբակների արանքներում վերքերով ծածկվում են, որդերը

եռում են և խեղճ անասուններին օրերով ու շաբաթներով առանց ուտելու և չընկնելու պատճառով երեակայեցեք ձեզ մի անասուն, որ կեցողից և չորս ոտքերից բռնված լինի վերքերով, շաբաթներով առանց ուտելու մի կողքի վրա պառկի, սրպիսի կմայք կը դառնայ: Շատերը նոյն իսկ զգում են ոտքերի պէնդները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՍԻ ԶԻՒՆՈՒԹԻՒՆԸ

«Italia» լրագրի խօսքով, Վիկտոր-Էմանուէլ Թագաւորը հրաման արձակեց պատրաստել Կիլիկիայը պապի մահվան դէպքում, որովհետև պատրաստվում է վերադառնալ Հռոմ Բնդունելով Փրանսիական դեսպանին, Թագաւորը իր վիշտը յայտնեց Պրանսիայի հակա-կրօնական քաղաքականութեան առիթով:

Վիլհելմ կայսրի դեսպանը Հռոմ եկած Վիլհելմ կայսրի դեսպանը, որին կայսրը յանձնել է իր սեփական ձեռքով գրած նամակը պապին, հերթով այցելութիւններ է գործում բոլոր կարգիւններին, ինչպէս այդ պահանջում է հռոմէական կուրիայի էտիկետը: Կարգիւններից իւրաքանչիւրն դեսպանը կայսրի ցաւակցութիւնն է յայտնում պապի հիւանդութեան առիթով: Բայց դեսպանի գլխաւոր նպատակը, ի հարկէ այն չէ, որ ցոյց տայ, թէ Վիլհելմ կայսրը որպիսի խորին յարգանքով է վերաբերվում պապին: Ոչ այդպէս ուրիշ նպատակներ կան: Դեսպանի նպատակն է նախ, մանրամասն և ճիշդ հասկացողութիւն կազմել, թէ մեր կարգիւնները աւելի շատ շանտ ունեն պապ ընտրվելու, իսկ ամենազլխաւորը, աշխատել յօդուս Գերմանիայի շահերին յարմար թեկնածուների համար: Գերմանիայի դեսպանի նպատակն է նախ աշխատել ի նպատակ Գերմանիային համակողմ վարչապետին, Գոտտի կամ Ալլիանդի կարգիւններին: Երկրորդ՝ ամբողջ ուժով ագիտացիա անել կարգիւնաւ Րոմ պապին դէմ, որին Գերմանիան չէ ուզում պապ տեսնել:

Կարդիմալներ լուռ են: Երբ Պիո IX-ի մահից յետոյ «Times»-ի հուշակաւոր թղթակից Բլոյից դիմեց կարգիւնաւ Պրանսիին այն հարցով, թէ ինչ են տուած կարգիւնները պապի առաջնակա ընտրութեան մասին, Պրանսիկն պատասխանեց կարճ:

— Կարդիմալները լուռ են:

Ճիշդ այդպէս կարգիւնները լուռ են և այժմ,—լուռ են հոգն օտարների վերաբերմամբ: Վատիկանի հին օրէնքը ասում է, որ ով կարգիւններից կը թոյլ տայ իրան խօսել որ և է մէկի հետ պապի ընտրութեան մասին, նա ենթարկվում է բանադրութիւն: Պապի ընտրութիւնը իւրաքանչիւր կարգիւնաւ պէտք է կատարէ անկախ կերպով, մաքուր խղճմտանքով, և միմիայն խղճմտանքը պէտք է լինի ընտրողի խորհրդատուն և ղեկավարը: Կարգիւնների լուռութեան վերաբերեալ հին օրէնքը վաղուց արդէն չէ գործադրվում: Բայց կարդիմալները ամենամեծապէս զգուշութիւն են պահպանում, և եթէ լուռ են բացում ու պապ գալ պապի մասին, այն էլ շատ մօտ անձանց հետ: Բայց իւրաքանչիւր կարգիւնաւ ունի իր բաղաժիթ: Կողմնակիցները թէ հազարականներին և թէ աշխարհականներին, որոնք լաւ տեսնակ են իրանց պատօնի գիտաւորութիւնների, համակրութիւնների մասին, ահա դրանք են, որ ագիտացիա են անում, հաղորդում են օտար պետութիւնների զիջումատներին և թղթակիցներին այս կամ այն թեկնածուին: Կարգիւնները մանրամասնութիւնները, հետեւելով երբեմն ուղղակի կարգիւնների ներշնչմանը, —բայց իրանք կարգիւնները լուռ են: Նրանք կը խօսեն միայն առանձնորդ օրը պապի մահից յետոյ, կը խօսեն կոնկլաւում, տալով իրանց ձայնը այս կամ այն թեկնածուին: Պապի մահից յետոյ տաս օր շարունակ հռոմէական կուրիայի պետական մեքենան կանգ է առնում, չը նայելով, որ պապի տեղապահը այդ ժամանակամիջում շարունակում է կատարել պապի բոլոր ֆունկցիաները, և իւրաքանչիւր կարգիւնաւ առանձնապէս իր նախկին բոլոր պարտաւորութիւնները:

Մարգարիտ քաղաքի քեկնածուն, Թոմա-կան այրի թագուհի Մարգարիտան նոյնպէս ունի իր թեկնածուն պապական գահի համար: Նա կարգիւնաւ կապէջլատարն է, թագուհու բաղաժիթայ խոստովանաւորը: Այդ կարգի-

նալը կարող էր հող պատրաստել Վատիկանի մերձաւորութեան համար Կիլիկիայի հետ, որին, օակայն, չէ համակրում կարգիւնների մեծամասնութիւնը: Կարգիւնաւ Կապէջլատարն Բարի և Թանաւորաւ մարդու համբաւ է վայելում:

Պապի երեք կապիներ: Պապը, ինչպէս հաստատուած են նրան մօտ անձաւորութիւնները, երեք կտակ է կազմել. մէկը յատկապէս վերաբերվում է եկեղեցուն և պապական իշխանութեան, միւսը քաղաքական, իսկ երրորդը մասնաւոր բնաւորութիւն ունի: Գաղաքական կտակը, որ գրված է պապական բուլլայի ձևով, պէտք է առաջին անգամ կարգադրվի միայն կոնկլաւում, որովհետև մինչև նոր պապի ընտրութիւնը նրա բովանդակութիւնը օտարներից ոչ ոք չի իմանայ, և հէնց կարգիւնաւներն և նրա բովանդակութիւնը միայն այն ժամանակ կիմանան, երբ նրանք արդէն օտար աղբիւրներից ազատ կը լինեն: Այդ բուլլայի բովանդակութիւնը պապը գաղտնի էր պահում կարգիւններից:

Պապի մանկութիւնը, Հռոմի դէպի Նէպոլ տանող ճանապարհից քիչ հեռու, լեռների մէջ ընկած է մի փոքրիկ քաղաք՝ Կարպինետօ: Նուրում է մօտաւորապէս 5000 հոգոց բաղկացած աղքատականութեամբ: Նեղ ու խաւար են նրա փողոցները. տները ծիծեռնակների բնակիչներն են: Կապն են ժայռերին: Մօայ ու տեղ է նրա տեղը: Տներն միջից աչքի է ընկնում միայն մէկը իր մեծութեամբ ու համեմատական գեղեցկութեամբ: Դա Պիչիի ընտանիքի տունն է: Այդտեղ է ծնվել ու մեծացել Հռոմի պապը—Լեոն XIII-ը:

Այդ հին տան մէջ ապրում էր պապի հայրը—գնդապետ Լիւդովիկ Պիչիին: Նա վաղուց էր թողել զինվարական ծառայութիւնը և 1809 թվականից, Փրանսիական կառավարութեան կարգադրութեամբ վարում էր Կարպինետօ քաղաքի կապիտանի պաշտօնը: Սիրում էր ժողովուրդը աղքատ Պիչիին և հոգատար հայր էր անուանում նրան:

Գնդապետ Պիչիին կինը պատկանում էր փոքրիկ Կօրի քաղաքի պատրիշիական մի ընտանիքին և յայտնի էր իր բարի բնաւորութեամբ:

Ամուսնական այդ զոյգն ունեցաւ եօթը զաւակ, որոնցից մէկն էր Վինչենցոն, որ յետոյ դարձաւ Հռոմի պապ: Մօր մահից յետոյ Վինչենցոն Գիւպինօ անունն ընդունեց: Իսկ ընտանիքում նրան ուղղակի Նինօ էին անուանում: Նա զաւակացեց կայսրառն և ընտանակ երեխայ էր, որ շատ արագ էր զարգանում թէ ֆիզիքապէս և թէ մտաւորապէս: Դեռ երկու տարեկան հասակում նա վազվում էր տան սենեակներում և սիրում էր մանուշակայեղ ախտը, որտեղ կապված էր քեռու ձին: Փոքրիկ Նինօն շատ էր սիրում ձի, տանը խաղալիս շարունակ ձի էր չինում աթոռներից և հեծնում, հրճվում Մոնդիներ զրանից ենթադրում էին, թէ Նինօն ապագայում զինվարական է դառնալու:

Սակայն մի քանի տարուց յետոյ այլ ևս ձին չէ գրաւում մանկան ուշադրութիւնը, այլ կրօնական արարողութիւնները: Նա տանը խաղալու սեղան է չինում և իրան քահանայ երեկեայից, զանազան աղօթքներ կարդում:

Անցնում են մի քանի տարի ևս: Հարկաւոր էր երեխայի կրթութեան մասին մտածել: Կարպինետօն դրա համար չունէր ոչ մի յարմարութիւն, չը կային կանօնաւոր դպրոցներ, չը կային ուսուցիչներ: Հարկաւոր էր ուրիշ տեղ ուղարկել: Հայրը ուղղում էր իր երկու որդիներին էլ Զուլեպպօն և Նինօն զինվարական ծառայութեան համար պատրաստել, իսկ մայրը աւելի հակված էր դէպի կրօնական կոյսումը: Վերջապէս մօր իղձը կատարվում է 1818 թ. երկու երեխաներին էլ բեռում յանձնում են Վատիկանի եղբայրական դպրոցին:

—«Շատ դառն, շատ ծանր էր իմ թանկահին մանկիկներից բաժանվելը, գրում է մայրը իր բարեկամներից մէկին, բայց Վատիկանից օտարված նամակները շատ մխթաբական են: Երբեք գտնում են երեխաներին և նրանք էլ զոհ են իրանց: Գրութիւնից Յոյս ունեմ, որ նրանք իմ մխթաբութիւնը պիտի դառնան...» Եւ այդ յոյսը լիովին արդարացաւ: Կրօնական դաստիարակութիւնը պատրաստեց այն նշանաւոր մարդուն, որը այնքան լաւ յիշատակներ է թողել, այնքան մեծ դեր է խաղացել թէ իբրեւ քահանայ, թէ իբրեւ Բիշոֆայի Նունցիոս, Պերուշիայի եպիսկոպոս, կարգիւնաւ և վերջապէս իբրեւ պապ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, յուլիսի 23-ին
Պարսից կառավարութեան թուրքական շնորհիւ, Սալմաստը նորից ասպատակութիւններ է աշխարհ է դառնում:

Յունիսի 18-ին թիւրքաց սահմանապահ Շարաֆ-բէյը հինգ հարիւր ձիաւորներով, որոնց մէջ եղել են և թիւրք զինւորներ թրքական շնորհով, յարձակվեց Սալմաստի Հին-Քաղաք կոչված քաղաքամասի վրա: Քաղաքից դուրս սահմանապահ պարսիկ ձիաւորները ընդհարվում են Շարաֆ-բէյի հետ, պարսիկներից սպանվում են երեք հոգի, մէկն էլ շատ ծանր կերպով վիրաւորվում է: Շարաֆ բէյի զորքերը քշում են Հին-Քաղաքի ոչխարը թուրք 300—400 հատ, ոչխարաւորը ուղում է գիւմարութիւն ցոյց տալ, ինքն էլ սպանվում է թիւրք առկառներին: Մի այլ տեղ էլ մի խումբ զորքեր թիւրք ասկարների հետ ուղում են ձիաներ փախցնել: Ձիաւորը գնդակի հարուածով գետնին է գլորում զրանից մէկին: Միւսները փախուստ են տալիս: Ձիաւորը վերցնում է սպանվածի ձիւն և փախչում աղաւթում է: Այս թաւանից յետոյ Շարաֆ-բէյը վրան է զարկում Պարսից օսմանի վրա և սպանում է մի այլ յարմար օրվայ, որ նորից յարձակում գործ է Սալմաստի վրա:

Պարսից սահմանապահ Ջաֆար-Աղան, որ թագաժառանգից մի ամիս առաջ ոսկէ-սուր էր ընծայ ստացել—անխռով նստել էր Ճարայում, և սպանում էր, որ Շարաֆ-բէյը հեռանայ գնայ, յետոյ ինքը տեղիցը շարժվի: Սալմաստի բնակչութիւնը սաստիկ զրգոված է Ջաֆար Աղայի այդ վարմունքի վրա և խիստ բովանդակութեամբ մի հեռագիր է ուղարկել թագաժառանգին և բացատրել բանի էությունը:

Շարաֆ-բէյի Սալմաստ մօտերուն առիթ տուողը Ջաֆար-Աղան է եղել: Ոչ շատ առաջ Ջաֆար-Աղան թաւանի էր գնացել թիւրքաց օսմանը, թաւանի էր հինգ գիւղ և սպանել էր աւելի քան 30 մարդ: Ահա այդ պատճառով էլ Շարաֆ-բէյը եկել էր վրէժը լուծելու, Սալմաստը թաւանելու, որի պաշտպանութիւնը Ջաֆարին է յանձնված:

Ջաֆար-Աղան ինքն ըստ ինքեան վերջրած ամենամեծ պատուհան է սալմաստցիներին համար: Նրա զորքերը օր ու գիշեր հէնց Սալմաստում կողպուստներով և թաւաններով են պարապում: Բայց չը կայ մէկը, որ խօսի չը կայ մէկը, որ լսի ժողովրդի ձայնը, դառն բողբոջ և աշխատէ այդ չարիքի առաջն առնել: Հին-Քաղաքի դէպքից յետոյ Ղարաղաղի և Սուլեյմուղի ձիաւորները թուրք 800 հոգի, Սալմաստ են գալիս, թէ ինչպէս համար, առայժմ յայտնի չէ: Ուսք կայ, թէ թագաժառանգն էլ Սալմաստ է գալու, բայց արդեօք այդ գնալ-գալով մի օգուտ տեսնելու է Սալմաստի կեղեքված ժողովուրդը:

Պարսից կառավարութեան նման թոյլ երկում ոչ ոք չէ կորող ժողովրդի շահերը պաշտպանել, բացի իրանից—ժողովրդից, որովհետև ոչ կանօնաւոր զօրք կայ, ոչ օրէնք կայ և ոչ էլ կառավարական արդարադատ ատեաններ: Միայն ժողովուրդը կարող է իր գոյն ու կեանքը պաշտպանել, երբ ազատ իրաւունք տրվի նրան զէնք գործածելու, անապահով գիւղականներում համարձակ գործելու:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Paris Nouvelles» լրագրի թղթակիցը գրում է Կ. Պօլսից, թէ Սկուտարից օտարված են շատ յուղի տեղեկութիւններ—մի քանի թիւրք դատաւորներ զաղանաբար սպանված են ալբանացիներից, որոնք զրանով կամենում էին բողբոջ յայտնել իրանց երկրում: Այնպիսի ատեանաւորներ նշանակելու դէմ, որոնք չեն պատկանում ալբանական ցեղին: Իրիդ-Կիսու-կում շատ վրդոված են այս տեղեկութիւններով, որոնք ցոյց են տալիս, թէ մաքեթի որպիսի յուղումն է տիրում այժմ ալբանացիների մէջ:

—«Temps» լրագրի թղթակիցը հաղորդում է Բէլգրադից, թէ օտարերկրիայ բոլոր դեսպանները մնում են իրանց տեղերում, բացի անգլիականից, որը, ինչպէս յայտնի է, հեռացել է Բէլգրադից: Նրա փոխարին էր նշանակվել մի ուրիշ անձն այն ժամանակ, երբ յեղափոխական այն միւստրութիւնը, որի ձեռքին է այժմ իշխանութիւնը Սերբիայում, կը հաւատարմապաշտեց և նրա տեղ կը նշանակվի սահմանադրական միւստրութիւն և երբ, բացի սրանից, պատժված կը լինեն մայիսի 29-ի սպանութիւնների մէջ յանցաւոր օֆիցիւրները:—Глас Србства» լրագրից, որ չապաւոված սերբերի օրդանն է Բէլգրադում, խօսելով Պետր թագաւորի մասին, ի միջի այլոց, ասում է. «Ա՛ր»

Электронпечатня Гроз. Изд. Т-ва, Б.Ванюшина ул.